**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ** N 3

**ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ**-19/43 **ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «9» հոկտեմբերի 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 7-9, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Հ. Կարախանյան | ՀԱԱՀ հիմնադրամի առաջին բուժօգնության կետի բժիշկ, |
| Կ. Սուքիասյան | ՀԱԱՀ հիմնադրամի թերապիայի, վիրաբուժության և ծննդագիտության ամբիոնի վարիչ, |
| Հ. Գրիգորյան | ՀԱԱՀ հիմնադրամի կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության ամբիոնի ասիստենտ, |
| Գ. Հարությունյան | ՀԱԱՀ հիմնադրամի մատակարարման բաժնի պետ, |
| Ա. Աբովյան | ՀԱԱՀ հիմնադրամի անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝ |

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Ե. Հարությունյանը՝ ՀԱԱՀ հիմնադրամի գնումների բաժնի մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Կարախանյանը, իսկ քարտուղարն էր՝ Ե. Հարությունյանը:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:

2. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

## 1.**ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ**-19/43 **ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Զեկուցեց քարտուղար Ե. Հարությունյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

**ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ**-19/43 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Ե. Հարությունյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. Հաստատել ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) **Նուվել Ֆարմա ՍՊԸ՝** բավարար

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

## 2. **ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ**-19/43 **ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Որոշվեց՝

1. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնման ընթացակարգի 82-**րդ**, 83-**րդ** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **Նուվել Ֆարմա ՍՊԸ**-ին,

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Կարախանյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Կ. Սուքիասյան _____

Հ. Գրիգորյան _____

Գ. Հարությունյան _____

Ա. Աբովյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ե. Հարությունյան _____